ՍՓՅՈՒՌՔՈՒՄ

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳԻՐԸ

Վերջերս ստացանք Մայր Աթոռ Ս. Էջմիածնի պաշտոնաթերթ «Էջմիածին» ամսագրի 1965-ի ապրիլ բացառիկ թիվը, արտակարգորեն ճոխ բովանդակությամբ։ Անվերապահորեն կարելի է ըսել, թե ապրիլյան մեծ եղեռնի հիսնամյակին նվիրված բացառիկ հրատարակություն մըն է «Էջմիածին» ամսագրի այս թիվը։ Բացառիկ նաև այն իմաստով, որ արտասահմանի մեջ լույս տեսած մեր բոլոր ամսագրերուն կամ այլ կարգի հրատարակություններուն մեջ, որոնք հատկացված էին մեր մեծ եղեռնի հիսնամյակին, «Էջմիածին» ամսագիրը կխլե առաջնության դափնին։ Ասիկա պատիվ կբերե Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին, որ արթնությամբ կհսկե ամսագրի հրատարակության վրա. պատիվ կբերե նաև թերթին խմբագրին, որուն առողջադատ, իմաստալից և կորովի խմբագրականները միշտ կկարդացվին հափշտակությամբ և հաճույքով։

Միջանկյալ հոս ցավով պետք է դիտել տանք, որ ունինք նաև կրոնական այլ թերթեր, որոնց բովանդակությունը պարզապես ամոթ կբերե անոնց իրենց հովանավորությունը տվող եկեղեցականներուն, որոնք իրենց ձեռքին տակ նյութական լայն միջոցներ ունենալով հանդերձ, պարզապես թերթ մը հրատարակած ըլլալու համար կմսխեն մեծ գումարներ...։

«Էջմիածին» ամսագիրը, անկախ հիշյալ բացառիկեն, արդեն ուշագրավ հրատարակություն մը դարձած էր Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա-ի գահակալության առաջին օրերեն իսկ։ Թերթին բովանդակությունը երթալով ճոխացած է՝ բանասիրական, կրոնական, պատմական և գրական այլազան հոդվածներով, որոնց մեջ հիշատակելի պիտի մնան, ի միջի այլոց, Հ. Ճ. Սիրունիի ուշագրավ ուսումնասիրությունները։ Ոչ նվազ կարևորություն տրված է նաև թերթին էջերուն մեջ Մայր Աթոռի հովանավորությունը վայելող եկեղեցական ու կրթական շարժումներուն և Հայաստանի վերելքը պատկերացնող խնամյալ լուրերուն։ Սփյուռքի կարևոր եկեղեցական շարժումներն ալ տեղ գրաված են թերթին էջերուն մեջ։

Այս իրողությունները, անշուշտ, կհատկանշեն պարագա մը, որ ուրախություն կպատճառե Մայր Աթոռի կյանքով հետաքրքրվող բովանդակ հայության։ Ադիկա այն շարժումն ու գործունեությունն է, որ սկսած է ցցուն կերպով հայտնվիլ Մայր Աթոռի մեջ Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա-ի գահակալութենեն ասդին։

... Տ. Տ. Վազգեն Ա Կաթողիկոսի և Իր նախորդներու իմաստուն և նվիրյալ առաջնորդության շնորհիվ, Ս. Էջմիածնի ձայնը այսօր ալ կհնչե հայ հավատացյալ ժողովուրդի ականջին իր երբեմնի քաղցրությամբ ու հեղինակությամբ։

Ասկե քսան տարի առաջ կարելի չէր այն լավատեսությամբ խոսիլ Ս. Էջմիածնի և Մայր Աթոռի իրականության շուրջ, որքան կարելի է խոսիլ այսօր։ Փաստերը մեջտեղն են մեր ըսածները հաստատելու համար։ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հեղինակությունը այսօր կգտնվի նախանձելի վիճակի մեջ և ոչ միայն Հայաստանի ժողովուրդն ու մտավորականությունը, այլ ուղղակի կառավարական ու պետական շրջանակները մեծագույն հարգանքով կվերաբերին Ամենայն Հայոց Կաթողիկոսին անձին ու հեղինակության հանդեպ։ Ասիկա որքան իրականություն, նույնքան ուրախալի և գոտեպնդիչ իրողություն է։

Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա-ի գահակալության օրերուն ոչ միայն «Էջմիածին» ամսագիրը դրվեցավ նախանձելի վիճակի մը մեջ, այլ նաև դպրեվանքը, ուրկե շրջանավարտ եղողներ այսօր կմատակարարեն Հայաստանի և դրացի հանրապետություններու հայ հավատացյալներու հոգևոր պետքերը։ Դարձյալ, Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա-ի հեղինակության և անձնական հմայքին շնորհիվ, ուղղակի փլուզումե կփրկվին հայ եկեղեցական ճարտարապետության կոթողներն հանդիսացող հայ եկեղեցիներն ու վանքերը։

Ասոնք երևույթներ են, որոնք խորապես կուրախացնեն արտասահմանի հայ հավատացյալները։ Հիշյալներու ուրախությունն ու լավատեսությունը կրկնապատկված կըլլա, երբ կտեսնե, որ Ամենայն Հայոց Հայրապետը հաճախակի այցելություններ կուտա աշխարհացրիվ իր հարազատներուն, որոնք միշտ կարոտով ու աղապատանքով կդիմավորեն Ս. Էջմիածնի արթուն ու շնորհալի Գահակալը, Անոր առաքինազարդ անձին մեջ մարմնացած տեսնելով Հայաստանյայց փառապանծ ու դարավոր Եկեղեցիի առաքելատիպ հին երանաշնորհ դեմքերը։ Ամենայն Հայոց Հայրապետը տակավին նոր վերջացուց Բուլղարիո և Ռումանիո թեմերուն տված իր հովվապետական խրախուսիչ այցելությունները։

«Էջմիածին» ամսագրի ներկա նախանձելի վիճակը ուղղակի մեկ գեղեցիկ արտահայտությունն է նաև՝ հայ ժողովուրդի աննկուն ու շինարար կամքին, որ տարապայման և հոգիները փորձող ու խամրեցնող դժնդակ պայմաններու տակ անգամ, դիտե մնալ առույգ ու աննվաճ, միշտ հայտնաբերելով հայության անմահ ոգին հավիտենականությունը։

Հայության մեծ եղեռնի հիսնամյակին առթիվ լույս ընծայված «Էջմիածին» ամսագրի ապրիլյան թիվը պիտի խայտացնե մեր երկու միլիոն զոհերուն հոգիները, որոնք ինկան 1915—1918-ի տարագրության սև օրերուն՝ արաբական կիզիչ անապատներու ճամբաներուն վրա, որքան ազատության ի խնդիր, նույնքան հայության դարավոր հավատքին ի խնդիր, որուն անմահ խորհրդանիշը եղած է միշտ մեր հազարամյա և անխորտակելի Ս. Էջմիածինը, իր լուսապսակ մեծ գահակալներով։

(Խմբագրական «Նոր Աշխարհ» շաբաթաթերթի, Նյու-Յորք, 10 հուլիսի 1965 թ., № 34)։